

Բանալի բառեր` բանկ, արտարժույթային դիրք, ռիսկ, ներգրավված միջոցներ, տեղաբաշխված միջոցներ, կուտակային ճեղքվածք:

ՀՏԴ 336:339

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՅ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Անուշ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու
ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի ասիստենտ

ՀՀ բանկային համակարգը երկրի տնտեսության արագ զարգացող ոլորտներից է: Բանկային համակարգի արդյունավետ աշխատանքի համար կարևորվում է ռիսկերի կառավարումը, իսկ բանկերը հիմնականում առնչվում են վարկային, իրացվելիության, տոկոսադրույթի և արտարժույթային ռիսկերի հետ:

Արտարժույթային ռիսկը պայմանավորված է ապագայում արտարժույթի փոխարժեքի շարժման անորոշությամբ, այսինքն՝ ազգային արժույթի գնի հարաբերակցությունից այլ արտարժույթների նկատմամբ: Արտարժույթային ռիսկ առաջանում է, բանկի որ բանկը ձեռք է բերում և վաճառում արտարժույթ, տրամադրում է վարկեր և ներգրավում ավանդներ՝ արտարժույթով:

Արտարժույթային ռիսկին համահունչ կարելի է արտարժույթային դիրքը, որն արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև տարբերությունն է, հաշվի առած հետհաշվեկշռային անավարտ գործարքների նկատմամբ պահանջներն ու պարտավորությունները:

Բանկերի արտարժույթային դիրքը կարող է լինել փակ և բաց: Բաց արտարժույթային դիրքն իր հերթին կարող է լինել կարճ արտարժույթային դիրք և երկար արտարժույթային դիրք:

Փակ արտարժույթային դիրք կամ զրոյական դիրք է համարվում, երբ արտարժույթային ակտիվները և պարտավորությունները քանակապես հավասար են:

Բաց արտարժույթային դիրքի դեպքում արտարժույթային ակտիվները և պարտավորությունները քանակապես հավասար չեն:

- Կարճ արտարժույթային դիրքի դեպքում արտարժույթային ակտիվները փոքր են արտարժույթային պարտավորություններից:

- Երկար արտարժույթային դիրքի դեպքում արտարժույթային ակտիվները գերազանցում են արտարժույթային պարտավորությունները:

Բանկի արտարժույթային դիրքը կարող է լինել նաև.

- Համախառն արտարժույթային դիրք, որը հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

- Չուտ արտարժույթային դիրք, որը հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի հանրագումար, հաշվի առած տվյալ դիրքի նշանը (կարճ կամ երկար):

Արտարժույթային ռիսկն ընդհանուր առմամբ՝ բաժանվում է երեք խմբի.

- առևտրային արտարժույթային ռիսկ,
- կառուցվածքային արտարժույթային ռիսկ,
- այլ արտարժույթային ռիսկ:

Առևտրային արտարժույթային ռիսկը պայմանավորված է բանկի գործունեության ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների փոխարկումների, արտարժույթի առթև ու վաճառքի գործառնությունների (այդ թվում՝ հետհաշվեկշռային անավարտ գործառնությունների) հետևանքով արտարժույթային դիրքի փոփոխությամբ: Այս ռիսկի կառավարումը պետք է իրականացնի բանկի գանձապետական ստորաբաժանումը՝ արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու և կորուստներ չկրելու տեսանկյունից:

Ստորև աղյուսակ 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, թե արտարժույթային դիրքից և փոխարժեքների փոփոխությունից կախված բանկը վնասներ կկրի, թե օգուտներ կստանա:

Շատ կարևոր է նաև արտարժույթային գործառնությունների արդյունքում առաջացած վնասների և օգուտների հաշվառումը: Արտարժույթային գործառնություններից բանկը ստանում է 2 խումբ օգուտ կամ վնաս (կորուստ)

1. Արտարժույթի վերագնահատումից օգուտ կամ վնաս/66 1 10, 72 1 10/

2. Արտարժույթի առավաճառքից օգուտ կամ վնաս/66 0 30, 72 0 30/

Հաշվարկային փոխարժեքը յուրաքանչյուր օր փոխվում է, և բանկը պետք է վերագնահատի իր արտարժույթային հոդվածները

Փոխարժեքի ավելացումը կձևակերպվի հետևյալ կերպ

ԴՏ Ակտիվային հոդվածներ

ԿՏ 66 1 10

Միաժամանակ

Դո 72110

Կտ պարտավորություններ

Փոխարժեքի նվազում

Դո 72110

Կտ ակտիվային հոդվածներ

Միաժամանակ

Դո պարտավորություններ

Կտ 66110

Արտարժույթային վերագնահատման զուտ արդյունքը կախված է բանկի արտարժույթային դիրքից:

Աղյուսակ 1.

Դիրք	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն	Փոխարժեքի փոփոխությունից օգուտ/վնաս	Ակտիվների փոխարկումից ստացված օգուտ/կորուստ	Փոփոխության աստիճան	Պարտավորությունների փոխարկումից ստացված օգուտ/ կորուստ
Երկար	↑	↑	↑	>	↑
Երկար	↓	↓	↓	>	↓
Կարճ	↑		↑	<	↑
Կարճ	↓	↑	↓	<	↓
Փակ	↑	0	↑	=	↑
Փակ	↓	0	↓	=	↓

Այժմ ներկայացնենք արտարժույթի փոխանակման և արդյունքի հաշվառումը բանկում: Ենթադրենք ռեզիդենտ ֆիզիկական անձը ցանկանում է փոխարկել 100 ԱՄՆ դոլլար բանկում: Առաջի փոխարժեքը 450 ՀՀ դրամ, ԿԲ փոխարժեքը 455 ՀՀ դրամ:

• Առաջին քայլով բանկը ընդունում է 100 ԱՄՆ դոլլարը և մուտք անում դրամարկը՝ տալով հետևյալ հաշվապահական ձևակերպումը

ԴՏ 10 000 ԱՄԴ-100 ԱՄԴ

ԿՏ 39300 ԱՄԴ-100 ԱՄԴ

• Երկրորդ քայլով բանկը որոշում է 100 ԱՄԴ միջին գինը ՀՀ-ում՝ օգտագործելով ՀՀ ԿԲ միջին փոխարժեքը:

ԴՏ39300 ԱՄԴ-45500 ՀՀԴ

ԿՏ 39300 ՀՀԴ-45500 ՀՀԴ

• Երրորդ քայլով բանկը վճարում է հաճախորդին՝ օգտագործելով իր առաջի փոխարժեքը:

ԴՏ 39300 ՀՀԴ-45000 ՀՀԴ

ԿՏ 10000 ՀՀԴ-45000 ՀՀԴ

• Չորրորդ քայլով որոշվում է գործարքի արդյունքը: Բանկի համար առաջանում է 500 ՀՀԴ օգուտ:

ԴՏ 39300-500 ՀՀԴ

ԿՏ 66110-500ՀՀԴ

Արտարժույթային ռիսկի զսպան համար սահմանված են նորմատիվներ՝ համախառն և 2-րդ խմբի մեջ մտնող արտարժույթների համար: Սահմանափակումը կարգավորման առումով երկակի բնույթ է կրում՝ ինչպես դրամավարկային քաղաքականության իրականացման, այնպես էլ բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ նորմատիվը չի սահմանափակում ռիսկը յուրաքանչյուր արտարժույթի գծով, ինչպես նաև ժամանակահատվածի ցանկացած միջակայքի համար: Վերջինս հատկապես կարևորվում է, քանի որ դրամի փոխարժեքը ենթարկվում է տատանումների և գտնվելով միևնույն արտարժույթային դիրքում, բանկը կարող է ստանալ ինչպես օգուտ, այնպես էլ կրել վնասներ (կորուստներ) տարբեր ժամանակահատվածներում: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել բանկի ներքին սահմանաչափեր յուրաքանչյուր արտարժույթով դիրքի համար: Ընդունելի է նաև սահմանել սահմանաչափեր բանկի յուրաքանչյուր հիմնական արտարժույթով դիրքի համար, իսկ վերը նշված միևնույն խմբի մեջ մտնող մնացած արտարժույթների համար սահմանել զուտ սահմանաչափեր՝ հաշվի առնելով դրանց փոքր ծավալները: Այս դեպքում յուրաքանչյուր բանկ ինքնուրույն է որոշում, թե որ արտարժույթներն են իր համար հիմնական, այսինքն՝ որ արտարժույթներով է ձևավորված բանկի ներգրավված և տեղաբաշխված միջոցների հիմնական մասը:

Արտարժույթային ռիսկը կարելի է գնահատել արտարժույթային միջոցների կուտակային ճեղքվածքի (GAP-ի) և բանկի ընդհանուր կապիտալի հարաբերակցության վերլուծության միջոցով.

$$GAP = \frac{FXA - FXL}{\text{Ընդհանուր կապիտալ}}$$

Որտեղ՝

FXA-ն արտարժույթային ակտիվներն են,

FXL-ը արտարժույթային պարտավորություններն են:

Այժմ ուսումնասիրենք մի բանի բանկերի ցուցանիշներ (տես՝ աղյուսակ 2):

Վերոնշյալ աղյուսակ 2-ում ներկայացված է մի բանի բանկերի արտարժույթային ակտիվները և պարտավորությունները 2013-2015թթ. կտրվածքով, ինչպես նաև դրանց տարբերությունները և բանկերի արտարժույթային դիրքերը: 2015թ. բոլոր բանկերը գտնվում են ԱՄՆ դոլլարի երկար դիրքում, բացի Եյչ-Էս-Բի-Սի բանկից, այսինքն՝ բոլոր բանկերը կստանան օգուտներ ԱՄՆ դոլլարի բարձրացման հետևանքով, իսկ Եյչ-Էս-Բի-Սի բանկը, բանկի որ գտնվում է կարճ դիրքում, այսինքն՝

արտարժույթային պարտավորություններն ավելի շատ են քան արտարժույթային ակտիվները կկրի վնաս: Բանկերի արտարժույթային դիրքերը խոսում են նաև արտարժույթի փոփոխությունների վերաբերյալ նրանց կանխատեսումների մասին: Օրինակ՝ վերոնշյալ աղյուսակից կարելի է կարծիք կազմել, որ 2014թ. բոլոր վերոնշյալ բանկերը, բացի Արդշինբանկից, կանխատեսել են Եվրոյի փոխարժեքի անկում, բանի որ բոլորն էլ արտարժույթային կարծ դիրքեր ունեն, իսկ Արդշինբանկում կանխատեսել են հակառակը, որ Եվրոյի փոխարժեքը կաճի:

Աղյուսակ 2.

Արտարժույթային դիրքերի վերլուծություն առևտրային բանկերում

Ակթա-Կրեդիտ Ազդիկոյ բանկ								
ԱՄՆ դոլլար					Եվրո			
	Ակտիվներ	պարտավորություններ	FXA-FXL	դիրք	ակտիվներ	Պարտավորություններ	FXA-FXL	դիրք
2013	12473455	127016395	(2303171)	կարճ	1826773	1208855	617918	երկար
2014	114922631	125102646	(10180015)	կարճ	12317244	13087483	(770329)	կարճ
2015	117127222	112726517	4400705	երկար	12021096	12771005	(749909)	կարճ
Արդշինբանկ								
ԱՄՆ դոլլար					Եվրո			
	Ակտիվներ	պարտավորություններ	FXA-FXL	դիրք	ակտիվներ	Պարտավորություններ	FXA-FXL	դիրք
2013	97336273	95524344	1811929	երկար	7765089	8002871	(237782)	կարճ
2014	192569424	190483643	2085781	երկար	12998176	12989975	8201	երկար
2015	216828835	213549775	5065628	երկար	9084712	9146318	(61606)	կարճ
Եյչ-Էս-Բի-Սի բանկ								
ԱՄՆ դոլլար					Եվրո			
	Ակտիվներ	պարտավորություններ	FXA-FXL	դիրք	ակտիվներ	Պարտավորություններ	FXA-FXL	դիրք
2013	130130402	132865540	(2735138)	կարճ	20665083	20669181	(4098)	կարճ
2014	164937228	171376738	(6439510)	կարճ	24778546	25033319	(254773)	կարճ
2015	145931570	160964403	(15032833)	կարճ	27869322	19609875	8259447	երկար
Ամերիաբանկ								
ԱՄՆ դոլլար					Եվրո			
	ակտիվներ	պարտավորություններ	FXA-FXL	դիրք	ակտիվներ	Պարտավորություններ	FXA-FXL	դիրք
2013	188778307	189463636	(685329)	կարճ	33407443	33425165	(17722)	կարճ
2014	263284370	246558719	16725651	երկար	23046596	34610599	(11564003)	կարճ
2015	315255982	308612294	6643688	երկար	22219452	22432820	(213368)	կարճ

2013թ. ԱՄՆ դոլլարի միջին փոխարժեքը կազմել է 477.84, 2014 թվ.՝ 415.76, 2015թ.՝ 409.54 դրամ:

2013 թ. Եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 544 դրամ, 2014թ.՝ 552.16 դրամ, 2015թ.՝ 530.78 դրամ:

Արտարժույթային ռիսկը կարելի է հաշվարկել նաև VaR մոդելով (Value at Risk): VaR արտարժույթային ռիսկի գնահատման ցուցանիշը ներկայացնում է բարձր հավանականությամբ, որոշակի ժամանակահատվածում վերագնահատումից ակնկալվող հնարավոր առավելագույն վնասի վիճակագրական գնահատականը:

VaR ցուցանիշը հանդիսանում է ռիսկի գումարային չափ, որն ի զորու է իրականացնել տարբեր պորտֆելներով և տարբեր ֆինանսական գործիքներով ռիսկի համեմատություն:

VaR մեթոդով կարելի է հաշվարկել վարկային, արտարժույթային, իրացվելիության և այլ ֆինանսական ռիսկեր: Վերոնշյալից ելնելով, ստորև կներկայացնենք VaR մեթոդով հաշվարկման կարգը, որը կիրառելի է բոլոր ֆինանսական ռիսկերի հաշվարկման համար:

VaR ցուցանիշը ցույց է տալիս, թե ինչ չափի առավելագույն վնաս (կորուստ) կարող է ստանալ բանկը կամ ներդրողը՝ ընտրված հավանականությամբ որոշակի ժամանակահատվածի ընթացքում:

VaR ցուցանիշը հաշվարկելու համար անհրաժեշտ է որոշել մի շարք բազային բաղադրիչներ, որոնք ազդում են նրա մեծության վրա: Առաջին հերթին այն շուկայական գործոնների հավանական բաշխումն է, որն ուղղակիորեն ազդում է բանկի ակտիվների պորտֆելում ներառված գների փոփոխության վրա: Տվյալ խնդրի իրագործման համար անհրաժեշտ է ժամանակի ընթացքում վերոնշյալ ակտիվներից ամեն մեկի վարքագծի համար կառուցել վիճակագրություն: Շուկայական գործոնների բաշխումից հետո պետք է ընտրել վստահության միջակայք, այսինքն՝ այն հավանականությունը, որով վնասները (կորուստներ) չպետք է գերազանցեն VaR ցուցանիշը:

Այսուհետև անհրաժեշտ է որոշել դիրքերի պահպանման ժամանակահատվածը, որի ընթացքում գնահատվում են կորուստները: Հայտնի է, որ պորտֆելի VaR մեծությունը համարժեք է քառակուսի արմատ դիրքերի պահպանման ժամանակահատվածին: Այդ իսկ պատճառով էլ բավական է միայն հաշվել մեկօրյա VaR-ը, իսկ օրինակ՝ բառօրյա VaR-ը կստացվի կրկնակի ավելին:

Պարզ ասած, VaR մեթոդը նպատակ է հետապնդում ձևավորելու հետևյալը՝ «մենք համոզված ենք X%-ով, որ մեր կորուստները չեն գերազանցի Y մեծությունը, հաջորդող N օրերի ընթացքում»: Տվյալ խնդրի դիրքորոշման մեջ Y մեծությունը հենց VaR ցուցանիշն է:

Կառուցվածքային արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ բանկը հիմնում է մասնաճյուղ կամ դուստր ընկերություն այլ երկրում, այսինքն՝ այնպիսի երկրում, որի պաշտոնական արժույթը տարբերվում է բանկի գործունեության երկրի (մայր երկրի) պաշտոնական արժույթից:

Այս դեպքում բանկը պարտավոր է միավորել մասնաճյուղի կամ դուստր ընկերության հաշվեկշիռն իր հաշվեկշռի հետ, որի հետևանքով առաջանում է փոխարժեքային տարբերություն: Այդ տարբերությունը փոխանցվում է բանկի կապիտալին և համարվում է երկրորդային կապիտալի տարր:

Կառուցվածքային արտարժույթային ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է հեջավորել վերը նշված ներդրումները, օրինակ, միևնույն արտարժույթով միջոցներ ներգրավելու եղանակով:

Այլ արտարժույթային ռիսկն առաջանում է բանկի այն գործարքների հետևանքով, որոնք թղթակցում են եկամուտների և ծախսերի հաշիվների հետ (օրինակ, արտարժույթով ակտիվների և պարտավորությունների դիմաց տոկոսների կուտակումը):

Նմանատիպ գործարքների հետևանքով առաջացած արտարժույթային բաց դիրքերը անհրաժեշտ է կառավարել առևտրային արտարժույթային ռիսկի հետ միասին՝ դրանց համար սահմանված սահմանաչափերի շրջանակներում:

*Ներկայացվել է 16.08.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*